600.0062.30.03.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2016 թվականի №62Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի №293Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №293Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգում (այսուհետև՝ Կարգ), կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

   1) Կարգի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

      «2. Սույն կարգի №№1-5 հավելվածներով նախատեսված տեղեկատվությունը ներկայացվում է յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը, իսկ №№6-7 հավելվածներով նախատեսված տեղեկատվությունը՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող եռամսյակի ավարտը:».

2) Կարգի 4-րդ կետում «սույն կարգի NN1-4 հավելվածներով հաստատված ձևերով» բառերը փոխարինել «սույն կարգի NN1-7 հավելվածներով հաստատված ձևերով» բառերով:

3) Կարգը լրացնել «Տեղեկատվություն բաժանորդների միջին քանակի վերաբերյալ (ըստ մարզերի)»՝ №5, «Տեղեկատվություն սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների քանակի և տևողության նվազեցմանն ուղղված առնվազն տասն առաջնահերթ աշխատանքների վերաբերյալ»՝ №6, «Տեղեկատվություն մատակարարվող էլեկտրաէներգիայի լարման շեղումների քանակների և տևողության նվազեցմանն ուղղված առնվազն տասն առաջնահերթ աշխատանքների վերաբերյալ» №7 հավելվածներով՝ համաձայն №№1-3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
30 մարտի 2016թ.